



Ո

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ (2019թ.)

Հաշվետու ժամանակաշրջանում մի շարք ծրագրեր են իրականացվել, որոնք միտված են բնակչության առողջության պահպանմանն ու բժշկական ծառայությունների հասանելիությանը:

ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ներառված անձանց համար պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով հասանելի են դարձել նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող մի շարք բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ:

Ախտորոշված չարորակ նորագոյացություններով հիվանդների վիրահատական բուժումը հունվարից իրականացվում է անվճար, իսկ հուլիսից նաև՝ ճառագայթային բուժումն իրականացվում է պետական պատվերի շրջանակներում:

Ընդլայնվել են պետական պատվերի շրջանակներում անվճար պայմաններով մատուցվող սրտի անհետաձգելի վիրահատական (Stent for Life) ծառայությունները:

Փետրվարից իրականացվում է պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով գլխուղեղի սուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբեկտոմիայի ծրագիրը:

Ապրիլից ներդրվել է սանիտարական ավիացիայի ծառայությունը, որի նպատակն է հեռավոր մարզերում բնակչությանն առավել որակյալ շտապ բժշկական օգնության կազմակերպումը՝ պացիենտի ուղղաթիռով տեղափոխումը և Երևանի առաջատար բժշկական կենտրոններում մասնագիտացված բժշկական օգնության կազմակերպումը:

Մինչև 18 տարեկան երեխաների հիվանդանոցային բժշկական օգնությունն ու սպասարկումն հուլիսից ամբողջությամբ իրականացվում է պետական պատվերի շրջանակներում, նախկինում այդ հնարավորությունից օգտվում էին մինչև 7 տարեկանները:

Սեպտեմբերից մեկնարկել է անպտղություն ունեցող զույգերին աջակցող ծրագիրը, որով սահմանվել են անպտղության բուժման և հաղթահարման նպատակով պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով հետազոտությունների և բուժման, այդ թվում՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման ծավալները:

Վերանայվել են շտապ բժշկական օգնության նորմատիվները և գները, որի արդյունքում հերթապահող բրիգադների քանակն ավելացել է՝ ապահովելով ծառայության հասանելիությունը:

Հանրային առողջապահության ուղղությամբ ևս քայլեր են կատարվել:

«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» և մի շարք հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայ-

աստանի Հանրապետության օրենքների նախագծի փաթեթն Ազգային ժողովում անցել է առաջին ընթերցումը:

2019 թվականի համար պետական բյուջեով ձեռք են բերվել թվով 14 անվանում հակաուռուցքային դեղեր՝ մանկական քիմիաթերապիայի համար:

Մեկնարկել է դեղերի կողմնակի ազդեցությունների հաղորդման բջջային հեռախոսի հավելվածը: Դեղերի կողմնակի ազդեցությունների վերաբերյալ հավաքագրված տվյալներն օգնում են բացահայտել դեղերի անվտանգության խնդիրները և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ:

ՀՀ կառավարության 30.05.2019 թվականի թիվ 642-Ն որոշման համաձայն՝ մինչ այժմ պետական միջոցներով չտրամադրված Հեպատիտ Ց-ի բուժման համար անհրաժեշտ հակավիրուսային և հիպոֆիզային գաճաճություն արտանիշ ունեցող աճի հորմոն դեղերը 2020 թվականից կհատկացվեն անվճար:

Շուրջ 400 անուն դեղ, որոնք անհասանելի էին անապահով ընտանիքների համար՝ հուլիսի 1-ից տրամադրվում են անվճար:

Եվս 2 տարի ժամկետով երկարաձգվել է Դիաբետոն 60 մգ դեղի գնման գործընթացը: Այսպիսով, Շաքարային դիաբետոսի հիվանդները 2020-2021 թվականներին ևս պատշաճ կերպով և անխափան կապահովվեն ֆրանսիական «Լե Լաբորատուալ Սեդվիե» ընկերության արտադրության «Դիաբետոն ՄՌ 60-ի (գլիկլազիդ)» դեղով:

ՀՀ առողջապահության նախարարության միջնորդությամբ մարզերում աշխատանքի է նշանակվել նպատակային կլինիկական օրդինատորայի 36 շրջանավարտ:

Ներդրվել է վերակենդանացման բաժանմունքների ազատ մահճակալների ցուցադրման և շտապօգնության ծառայությանը փոխանցման մոդուլը: Նաև մշակվել, հաստատվել և իրականացվել է պետական պատվերի շրջանակներում էլեկտրոնային ուղեգրման և հերթագրման պիլոտային ծարագիր:

Ավելացել են առողջության առաջնային պահպանման մեկ բնակչի համար միջինացված գները, որի արդյունքում բարձրացվել է առաջնային օղակի բուժաշխատողների աշխատավարձը՝ 10-15%-ով:

Սոցիալական փաթեթի առողջապահության բաղադրիչի շահառուների բազայում ներառվել են բուժաշխատողների նոր խմբեր (շտապօգնության ծառայության, արյան կայանի աշխատողներ)՝ 620 անձ:

2019 թվականի ընթացքում ստորագրվել է առողջապահության բնագավառում օտարերկրյա պետության հետ համագործակցության 1 միջգերատեսչական համաձայնագիր, 9 փոխըմբռնման հուշագիր: